

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

**Ստուգաթերթ N 3**  
**գազի համակարգի՝ գազափոխադրման բարձր ճնշման էներգատեղակայանքի՝**

համար \_\_\_\_\_

\_\_\_\_\_ 201 թ.

(տեսչության տարածքային մարմնի անվանումը)

(հասցեն)

(հեռախոսահամարը)

(ստուգող անձի պաշտոնը)

(ազգանունը, անունը, հայրանունը)

(ստուգող անձի պաշտոնը)

(ազգանունը, անունը, հայրանունը)

(ստուգող անձի պաշտոնը)

(ազգանունը, անունը, հայրանունը)

ստուգման սկիզբը (ամսաթիվը) \_\_\_\_\_

ավարտը \_\_\_\_\_

(տնտեսավարող սուբյեկտի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

(ՀՎՀՀ-ն)

(տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը)

(հեռախոսահամարը)

(էլեկտրատեղակայանքի գտնվելու (տեղաբաշխման) վայրը)

(էլեկտրատեղակայանքի ղեկավարի կամ վստահված անձի ազգանունը, անունը, հայրանունը)

(հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագիր \_\_\_\_\_ ում կողմից \_\_\_\_\_ երբ է տրված \_\_\_\_\_

Ստուգման նպատակը/Ընդգրկված հարցերի համարներ \_\_\_\_\_

**ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ**

**Հարցաշար**

<b>Տեղեկատվական բնույթի հարցեր</b>						
<b>հարց</b>	<b>պատասխան</b>					<b>գնահատման բալլ</b>
	<b>բալլեր</b>					
	<b>1</b>	<b>3</b>	<b>5</b>	<b>7</b>	<b>9</b>	
Կառուցման տարին	Մինչև 10	10 և ավելի մինչև 20	20 և ավելի մինչև 30	30 և ավելի մինչև 40	40 և ավելի	(բալլx0.6)
Գազատարի երկարությունը (կմ)	Մինչև 10	10 և ավելի մինչև 30	30 և ավելի մինչև 60	60 և ավելի մինչև 100	100 և ավելի	(բալլx0.4)
Գազատարի վրա առկա կառույցների գազաբաշխիչ կայանների (ԳԲԿ), ճնշման ինքբաշխատ համակարգերի (ՃԻՀ) քանակը (հատ)	Մինչև 2	3-ից 4	5-ից 8	9-ից 12	13 և ավելի	(բալլx0.6)
Միջին տարեկան վթարայնության գնահատում՝ վերջին ստուգումից հետո, բայց ոչ ավելի, քան 3 տարվա կտրվածքով (վթարներ)	Մարդկանց կյանքին վնասի պատճառմամբ (առանց մահացու ելքի) մինչև 4 վթար	Մարդկանց կյանքին վնասի պատճառմամբ (առանց մահացու ելքի) 5 և ավելի վթար	Մարդկանց կյանքին վնասի պատճառմամբ (մահացու ելքով) վթար	Մարդկանց կյանքին վնասի պատճառմամբ (մահացու ելքով) 2-ից 4 վթար	Մարդկանց կյանքին վնասի պատճառմամբ (մահացու ելքով) 5 և ավելի կամ խմբակային մահացու ելքով վթար	(բալլx1)
	Տեղամասային մինչև 10 վթար	Տարածքային մինչև 10 կամ տեղամասային 11 և ավելի վթար	Համակարգային 1 կամ տարածքային 11 և ավելի վթար	Համակարգային 2-ից 4 վթար	Համակարգային 5 և ավելի վթար	(բալլx0.8)
<b>Ընդամենը</b>						

<b>Վերահսկողական բնույթի հարցեր</b>								
NN ը/կ	հարցի անվանումը	ստուգման մասին նշումը (✓)		չի պահանջ- վում (✓)	հղում նորմատիվ իրավական ակտին	կշիռը	մեկնաբա- նությունը	ստուգման մեթոդը
		այո	ոչ					
1.	Շահագործման ընթացքում ստորգետնյա գազատարների և գազաբաշխիչ կայանի (ԳԲԿ) գծային մասերի տեխնոլոգիական կապակցման մեկուսիչ ծածկոյթների խախտման և անթույլատրելի կոռոզիոն վնասվածքների բացահայտման դեպքերում, 8 տարին մեկ անգամ դրանց հիմնական նորոգումը կամ վերափորձարկումը կատարվում է				1. 11 գլխի 5-րդ բաժնի 66-րդ կետ	5		1°

2.	Գծային-շահագործողական ծառայությունում (ԳՇԾ) հետևյալ տեխնիկական փաստաթղթերը՝				1. III գլխի 14-րդ բաժնի 207-րդ կետ			
2.1.	հողատարածքները գազատարի ուղեգծի, գծային նորոգողների տնակների և այլ սենքերի համար հատկացնելու արձանագրությունների պատճեններն առկա են				- " -	3		1°
2.2.	մայրուղային գազատարի (ՄԳ) սպասարկվող հատվածի սխեմաները՝ տեղանքի իրավիճակային հատակագծով, առկա են				- " -	3		1°
2.3.	ՄԳ-ի և ստորջրյա անցումների տեխնիկական տեղեկաթղթիկներն առկա են				- " -	3		1°
2.4.	կազմակերպության ստանդարտների գրքույկներն առկա են				- " -	3		1°
3.	ԳՇԾ-ում հետևյալ օպերատիվ փաստաթղթերը՝				1. III գլխի 14-րդ բաժնի 208-րդ կետ			
3.1.	գազատարի ուղեգծի զննման մատյանն առկա է				- " -	3		1°
3.2.	նորոգման աշխատանքների մատյանն առկա է				- " -	3		1°
3.3.	հոտանյութի պահման և օգտագործման գործընթացների հրահանգներն առկա են				- " -	3		1°
3.4.	գազատարի և սարքավորման հետազոտման ու փորձարկման տեխնիկական արձանագրություններն առկա են				- " -	3		1°
4.	Գազատարի հուսալի աշխատանքն ապահովող պլանային զննման աշխատանքներն իրականացնելիս՝				1. III գլխի 11-րդ բաժնի 159-րդ կետ			
4.1.	պահպանման և նվազագույն հեռավորությունների գոտիներն ստուգվում են				- " -	4		1°
4.2.	ձորակների միջով ջրային արգելքներն ստուգվում են				- " -	4		1°
4.3.	երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհների անցումներն ստուգվում են				- " -	4		1°
4.4.	փականային և խողովակների վթարային պահուստի հրապարակների, մաքրիչ սարքերի ընդունման հանգույցների ուղեգծերի երկայնքով երթանցումներն ստուգվում են				- " -	4		1°
4.5.	գազատարին մոտեցումները, կամուրջները, ամբարտակները, գազատարների վրայով անցուղիները, ջրի բացթողման և այլ կառույցներն ստուգվում են				- " -	4		1°
4.6.	ուղեգծի երկայնքով կապի և էլեկտրահաղորդման գծերը, ուղեգծերի նշանները, ինչպես նաև այլ կազմակերպությունների հաղորդակցուղիներն ստուգվում են				- " -	4		1°
5.	Համաձայն մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված ծրագրերի և միջոցների, գազատարի հետազննման աշխատանքների վերաբերյալ՝				1. III գլխի 11-րդ բաժնի 165-րդ կետ			

5.1.	հետազննման արդյունքներով ձևակերպված արձանագրություններն (Ա) առկա են				- " -	5		1°
5.2.	Ա-երը՝ օբյեկտի շահագործման համար պատասխանատու անձանց մոտ և կազմակերպության արտադրական բաժնում, պահվում են				- " -	5		1°
6.	Ստորաբաժանումների կազմած՝ կազմակերպության կողմից հաստատված, գազատարի գծային մասի և դրա սարքավորման տարեկան ընթացիկ նորոգման ծրագիր-ժամկետացանկերն առկա են				1. III գլխի 11-րդ բաժնի 177-րդ կետ	5		1°
7.	Խողովակագծային արմատույրը՝				1. II գլխի 6-րդ բաժնի 69-րդ կետ			
7.1.	լրակազմ է և սարքին վիճակում				- " -	5		2°
7.2.	ըստ տեխնոլոգիական սխեմաների համարակալումն առկա է				- " -	4		2°
7.3.	գազի հոսքի ուղղության և փականի դիրքի ցուցանակներն առկա են				- " -	4		2°
8.	Գազատարի կազմի մեջ մտնող ԳԲԿ-երի ազդանշանման և ելքում ճնշման բարձրացման ու իջեցման ավտոմատ պաշտպանության համակարգերն առկա են				1.* VI գլխի 30-րդ բաժնի 321-րդ կետ	5		1° 2°
9.	Գազատարի կազմի մեջ մտնող ԳԲԿ-երի գազոտվածությունը հսկող սարքին համակարգերն առկա են				1. VI գլխի 30-րդ բաժնի 324-րդ կետ	4		1° 2°
10.	ԳԲԿ-երի փակիչ, կարգավորիչ և ապահովիչ սարքին արմատուրի, չվացվող ներկով գրված, տեխնոլոգիական համարակալումն առկա է				1. VI գլխի 30-րդ բաժնի 318-րդ կետ	4		2°
11.	Կազմակերպությունների կողմից նշակված ՄԳ-երի օբյեկտների շահագործման մեթոդներն ու սխեմաները կանոնակարգող՝				1. I գլխի 1-ին բաժնի 3-րդ կետ			
11.1.	արտադրական հրահանգներն առկա են				- " -	3		1°
11.2.	տեխնոլոգիական սխեմաներն առկա են				- " -	3		1°
11.3.	պաշտոնական հրահանգներն առկա են				- " -	3		1°
12.	ՄԳ-երը շահագործող կազմակերպության ստորաբաժանումները, ծառայությունները և տեղամասերը նորմատիվային տեխնիկական փաստաթղթերով ապահովված են				1. I գլխի 1-ին բաժնի 19-րդ կետ	3		1°
13.	ՄԳ-ի օբյեկտների և կառույցների զբաղեցրած տարածքի ցանկապատն առկա է, և գտնվում է սարքին վիճակում				1. II գլխի 4-րդ բաժնի 44-րդ կետ	4		2°
14.	Գազատարի սպասարկման համար նախատեսված էլեկտրատեղակայանքների ծրագրային նորոգումների և զննումների համար կազմված, սահմանված կարգով հաստատված տեխնիկական սպասարկման և նորոգման ժամկետացանկն առկա է				1. VII գլխի 34-րդ բաժնի 354-րդ կետ	3		1°

15.	Կառույցների հուսալի և անվտանգ աշխատանքի ապահովման նպատակով, կոռոզիայից պաշտպանության համար՝				1. VIII գլխի 36-րդ բաժնի 372-րդ կետ			
15.1.	էլեկտրահաղորդման սնման և ուղեգծի երկայնքով գծերի և կատողային պաշտպանության տեղակայանքների անվտանգ աշխատանքն ապահովված է				- " -	4		1° 2°
15.2.	պաշտպանության պոտենցիալը՝ ըստ տարածվածության ու ժամանակի, ապահովվում և հսկվում է				- " -	4		1° 2°
15.3.	կառույցների պաշտպանիչ շերտերը և կոռոզիայի վիճակը հսկվում են				- " -	4		1° 2°
16.	ԳԲԿ-ի շրջանցիկ գծի փակիչ արմատուրը փակ է և կապարակնաքված				1. VI գլխի 30-րդ բաժնի 325-րդ կետ	4		2°
17.	Յուրաքանչյուր ԳԲԿ-ի համար տեխնիկական փաստաթղթերը՝				1. VI գլխի 32-րդ բաժնի 336-րդ կետ			
17.1.	ԳԲԿ մտնող գազատարի ճյուղավորման ընդունման արձանագրությունը և գործադիր տեխնիկական փաստաթղթերն առկա են				- " -	3		1°
17.2.	գազատարի ճյուղավորման տեխնիկական սպասարկման սխեման և տեղանքի իրավիճակային հատակագիծն առկա են				- " -	3		1°
17.3.	սկզբունքային սխեմաներն առկա են				- " -	3		1°
17.4.	տեխնիկական տեղեկաթերթիկն առկա է				- " -	3		1°
17.5.	ԳԲԿ-ի շահագործման (կազմված ԳԲԿ-ի սարքավորման շահագործման հրահանգների հիման վրա) հրահանգներն առկա են				- " -	3		1°
17.6.	օպերատորի մատյանն առկա է				1. VI գլխի 32-րդ բաժնի 337-րդ կետ	3		1°
18.	Տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքները կազմակերպության տեխնիկական փաստաթղթերում գրանցվում են				1. II գլխի 6-րդ բաժնի 83-րդ կետ	3		1°
19.	Գործող նորմերին համապատասխան՝ ստորաբաժանումում փակիչ արմատուրի վթարային պահուստն առկա է				1. II գլխի 6-րդ բաժնի 85-րդ կետ	4		1° 2°
20.	Գազատարների և ավտոմոբիլային ճանապարհների հատման տեղերում «Զգուշացե՛ք գազատար է», «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշաններն առկա են				1. III գլխի 9-րդ բաժնի 130-րդ կետ	3		2°
21.	Այլ վերգետնյա և ստորգետնյա հաղորդակցողիների հետ գազատարի հատման տեղերը «Բարձր ճնշման գազատար» նշաններով նշված են				1. III գլխի 9-րդ բաժնի 132-րդ կետ	3		2°
22.	Փականային և միացման հանգույցների, խտուցքի հավաքման մաքրիչ սարքերի հրապարակների ցանկապատերի դռները կողպված են				1. III գլխի 9-րդ բաժնի 143-րդ կետ	3		2°

23.	Ջննումների ընթացքում հայտնաբերված խախտումները, վնասվածքները և մերժումները գազատարի գծային մասի գնման մատչանում գրանցվում են				<b>1.</b> III գլխի 11-րդ բաժնի 161-րդ կետ	3		1°
24.	Բնահողից գազատարի դուրս գալու տեղում 1.5 մ ոչ պակաս երկարությամբ, մեկուսիչ ծածկերի նորոգումը, առնվազն 3 տարին մեկ անգամ, իրականացվում է				<b>1.</b> III գլխի 11-րդ բաժնի 182-րդ կետ	4		1° 2°
25.	Պաշտպանիչ շերտերի վիճակի ընտրովի ստուգումը կոռոզիոն-վտանգավոր տեղամասերում, տարվա մեջ մեկ անգամից ոչ պակաս, գարնան-աշնանային շրջանում՝ հետևյալ աշխատանքների ձևով՝				<b>1.</b> VIII գլխի 37-րդ բաժնի 382-րդ կետ			
25.1.	վնասված մեկուսիչի փնտրումը՝ վնասվածքների փնտրիչով կամ հանովի չբևեռացված էլեկտրոդի մեթոդով, կատարվում է				- " -	3		1°
25.2.	պաշտպանիչ շերտերի անցողիկ դիմադրության չափումը՝ «թաց հպակի» հանրագումարային գնահատման մեթոդով, կատարվում է				- " -	3		1°
25.3.	հետախուզահորերում մեկուսացման վիճակի գործիքային և տեսողական հետազննումը կատարվում է				- " -	3		1°
25.4.	կոռոզիոն վնասվածքների հայտնաբերումը, դրանց խորության և մակերեսի որոշումը կատարվում է				- " -	4		1°
26.	Գազատարների շնքերի, կառույցների և օբյեկտների՝ գարնանային հորդացմանը նախապատրաստումն ստորաբաժանման մշակած ծրագրի համաձայն, հետևյալ աշխատանքների ձևով՝				<b>1.</b> X գլխի 51-րդ բաժնի 532-րդ կետ			
26.1.	գազատարի ուղեգծի դժվարանատչելի տեղերում անհրաժեշտ տեխնիկայով և նյութերով հագեցված ժամանակավոր հենակետերի կազմակերպումը կատարվում է				- " -	3		1° 2°
26.2.	ջրահեռացուցիչների, ջրատարների և ուրիշ կառույցների մաքրումը ջրաբերուկներից, ձյունից և սառույցից կատարվում է				- " -	3		1° 2°
26.3.	առավել պատասխանատու հատվածներում հերթապահ կետերի տեղադրումն իրականացվում է				- " -	4		1° 2°
27.	Էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձինք իրենց պատկանող էներգատեղակայանքներում տեղի ունեցած՝ մարդկանց կյանքին վնասի պատճառմամբ, ինչպես նաև համակարգային վթարների մասին, 2 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնին հայտնել են				<b>3.</b> Հավելված N 2-ի 1-ին բաժնի 5-րդ կետ	5		1°
28.	Կազմակերպության կողմից, որտեղ տեղի է ունեցել պատահարը, ստեղծված հանձնաժողովն իրականացրել է դրա քննությունը				<b>3.</b> Հավելված N 2-ի 2-րդ բաժնի 1-ին կետ	4		1°

Տվյալ ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ փաստաթղթերի հիման վրա՝

1. ՀՀ կառավարության 08.11.2007 թ.՝ «Մայրուղային գազատարների տեխնիկական շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1438-Ն որոշում.
2. ՀՀ կառավարության 15.01.2009 թ.՝ «Անվտանգության պահանջները մայրուղային գազատարներում» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 119-Ն որոշում.
3. ՀՀ կառավարության 12.04.2007 թ.՝ «Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների դասակարգումը, դրանց մասնագիտական քննության կարգը հաստատելու մասին» N 580-Ն որոշում:

**Ստուգման մեթոդների պայմանական նշանակումներն են՝**

**1° - փաստաթղթային**

**2° - ակնադիտական**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ